

---

---

## Լ. Յ. ՄԿՈՏՉՅԱՆ

### ԱՐԵՎԱՏԱՐԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԲԴՈՒՇԱՍԻՇԱՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1877-1878 թվականների ռուս-բուրքական պատերազմը երևան հանեց Օսմանյան պետության հիմքերի խարիսությունն ու փտածությունը, ցույց տվեց, որ այն կանգնած է փլուզման եղրին: Նոր զահ բարձրացած սուլթանի՝ Արդուկ Համբիդ II-ի (1842-1918) առաջ ժառացել էր կայսրությունը վերջնական կործանումից փրկելու հրամայական խնդիրը: Կառավագարումը սկսելով սահմանադրության հոչակումով՝ նորընծա սովորանք, սակայն, շատ շուտ հրամարվեց բարենորդումների (թեկուզ ձևական) բոլոր փորձերից և հաշվեհարդար տեսնելով համեմատարար առաջադեմ Միդդիշատյան ընդդիմադիր ուժերի հետ, երկիրը տարավ բոլորովին այլ ճանապարհով: Ինչպես Արդուկ Համբիդը, այնպէս էլ նրա հետնորդները, լավ էին հասկանում, որ պետության ճգնաժամի, քայլայնան պատճառների անկյունաբարը, նրա աքիլլեսյան գարշապարը եղել և շարունակում է մնալ ազգային հարցը: Օսմանյան կայսրությունն ամենից առաջ քրիստոնյա ժողովուրդների մեծ բանու էր, ուր նրանք ապրելով իսկական սորկական պայմաններում, դատապարտված էին դանդաղ մահացման, միշտ ենթակա ջարդերի և մուտքանական մոլեուանդության

այլայլ դրստրումների : Երկրում, փաստորեն, բացահայտորեն կիրառվում էին Դուրանի՝ «անհավատների» դեմ պատերազմներ, նրանց ոչնչացնելու հայտնի սկզբունքները : Ընդ որում, աշքարող էին արվում գրքի առավել մեղմ հատվածները, և այդպիսով, արիեստականորեն գրգորում էր մահմեղականների փայրագույքունը : Ինչպես ժամանակին դիպուկ կերպով նկատել էր Ֆր. Դ. Գրինը . «Երկրի հին, միջինավոր բնակիչները՝ հույսները, հայերը նեստորականները, հակոբիկյանները, հրեաներն ու սիրիացիները, օտարական են համարվում : Իրենց իրավական դրույաճք, նրանք ռազմագերիներ են համապատասխան իրավունքներով և պարտականություններով»<sup>1</sup> : Խոկ նրանց միակ «իրավունքը», ինչ խոսք, սովորանիմ հնագանդվելն էր : Միաժամանակ, նոյն բնակչությունն էր, որ դարեր ի վեր կազմում էր կայսրության հարստության առյուղը, նրա շտենարանը : Գիտությունն ու արվեստը, արիեստները, գյուղատնտեսությունը, առևտուքը գտնվում էին նրանց և հրեաների ձեռքին : Եվ սովորանենքը, և՝ բուրքական վերնախավը բնական է, որ նման պայմաններում շահագրգորված չին քրիստոնյաների լիակատար բնաջնջման մեջ և հասկանում էին, թե ինչ վնասներ կը բենք այդ դեպքում : 1821 թվականին բռնկված հունական ավատանքությունը եկավ արմատապես փախելու իրավիճակը : Դարի վերջին քառորդին դրույյունն էլ ավելի քարդացավ : Կայսրության դարավոր «քրիստոնեական խոցը» պայքեց և բականական ժողովուրդների ճնշող մեծամասնությունը բռթափեց սուրբանական լուծը : Արևելքում սուլթանների համար չար ուրիշականի նման հառնեց կառավարման լիբանանյան համակարգը : Ազգային հարցը պետության մեջ դարձավ այն գնուական խնդիրը, որի հետ էր կապվում արևելյան բռնապետության բախտը : Նշմարվում էին և դրա լուծման երկու ուղիները :

Տանիցած ուրիշ, քիչ թե շատ քաղաքակրթված երկիր, կիորդեր այս ծանր կացությունից դրաք գալ վերափոխումների, իրավական պետություն ստեղծելու միջոցով : Ինչպես նշվեց, Արդուկ Համիդի համար նման ճամապարհն անընդունելի էր : Սովորանական պետության բնույթն իսկ բացառում էր քարենորդությունը, ինչին ազգությունը պահպանությունը էր : Արդուկի համար անընդունելի էր առաջարկը՝ կայսերական ամենատարեր ծովուրդների, ցեղերի, ցեղախմբերի, Համիդը, նախ և առաջ, պետք է դիմեր նրանց միավորող գաղաքարին՝ նույնականությանը : XIX դարի երկորորդ կետին ձևավորվել էր համապատասխան զաղավարախոսությունը՝ պանիրամիզմը, որի հիմքում ընկած էր մահմեղականություն դավանող ժողովուրդների կազմությունը, վերագցային ու վերդասակարգային մի ընդհանուրություն կազմելու ծրագիրը : Դաս հիմնական կոչ՝ «Բոլոր մահմեղականները եղայրներ են և պետք է միավորվեն», կարող էր հզոր զենք դասնակ սուլթանի ձեռքին : Այս հնարավորություն կտար Արդուկ Համիդին, օգտվելով նույնականության «խայիֆի» իր տիտղոսից, հենվել ոչ միայն սեփական, այլև մյուս երկների մահմեղականության աջակցության վրա : Այսպիսով, պանիրամիզմը հիմնական զաղավարախոսական հիմք էր սուլթանի համար՝ նրա քաղաքական ծրագրերն իրագործելու ճանապարհին : Ընդ որում, եթե սկզբնապես պանիրամիզմը հիմնադիր ալ-Աֆրանու մոտ այդ ուսունակ շահագործվող և զարութային լծի տակ ապրալ մահմեղականների բռնորդի արտահայտություն կարելի է դիտել, ապա Արդուկ Համիդի կողմից այն վեր էր ածվել ծայրահեղ հետադիմական մի զաղավարախոսության, որն սովորված է Օսմանյան կայսրության քրիստոնյան ժողովուրդների դռմ :

1 Դուրան, 2 (189), 4 (76), 5 (39, 56), 8 (36, 37, 40, 42, 61, 62), 9 (5, 29, 40-36, 39, 41, 124) և այլն. Վառնա, 1910:

2 Տե՛ս Պոլոշենք արման և Տուրցիւ առաջարկությունները 1895 թ., Մ., 1896, ս. 281.

Արդուկ Համիդն իր երկարատև կառավարման ընթացքում գնաց այլ ուղիով և, ջանադրաբար վերլուծելով Ֆուադ փաշայի և նրա հաջորդների՝ ինուս 1860-ական թվականներից իրականացվող քաղաքականության արդյունքները, ի վերջո կարողացավ գտնել «ինվանդ մարդուն»՝ Օսմանյան կայսրությունը փրկելու ելքը : Ստեղծվեց պետությունը ճգնաժամամբ դրական բռնկված բերելու մասնակիցների մշակված, գործնակա բայց էությանը հրեշավոր ծրագիր : Այն ընդգրկում էր գործունեության բոլոր դրդուները, ուներ ամուր գաղափարախոսական հիմք՝ ի դեմս իրամիզմի և օսմանական հիմնարար դրույթների միախառնման : Հայվի էին արնված երկրի տնտեսական բույրությունը, արտաքին դրույթընը, սոցիալական-դասակարգային իրավակը, ազգային հարցը : Սուլթան հասկանում էր, որ տնտեսավես խարիսկած, բազմատար, ներքին հակառակություններից ծփառվող, դեպի անդուն սահող պետությանը, այնուամենայնիվ, հարկավոր էր մի անուր իմբը, թեկույթ և գաղափարի ձևով, որ միավորներ այն, ինչ կոչվում էր Օսմանյան կայսրությունը : Լինելով իսլամի տիրապետության երկրի դեկապար, կառավարելով մահմեղական ամենատարեր ծովուրդների, ցեղերի, ցեղախմբերի, Համիդը, նախ և առաջ, պետք է դիմեր նրանց միավորող գաղաքարին՝ նույնականությանը : XIX դարի երկորորդ կետին ձևավորվել էր համապատասխան զաղավարախոսությունը՝ պանիրամիզմը, որի հիմքում ընկած էր մահմեղականություն դավանող ժողովուրդների կազմությունը, վերագցային ու վերդասակարգային մի ընդհանուրություն կազմելու ծրագիրը : Դաս հիմնական կոչ՝ «Բոլոր մահմեղականները եղայրներ են և պետք է միավորվեն», կարող էր հզոր զենք դասնակ սուլթանի ձեռքին : Այս հնարավորություն կտար Արդուկ Համիդին, օգտվելով նույնականության «խայիֆի» իր տիտղոսից, հենվել ոչ միայն սեփական, այլև մյուս երկների մահմեղականության աջակցության վրա : Այսպիսով, պանիրամիզմը հիմնական զաղավարախոսական հիմք էր սուլթանի համար՝ նրա քաղաքական ծրագրերն իրագործելու ճանապարհին : Ընդ որում, եթե սկզբնապես պանիրամիզմը հիմնադիր ալ-Աֆրանու մոտ այդ ուսունակ շահագործվող և զարութային լծի տակ ապրալ մահմեղականների բռնորդի արտահայտություն կարելի է դիտել, ապա Արդուկ Համիդի կողմից այն վեր էր ածվել ծայրահեղ հետադիմական մի զաղավարախոսության, որն սովորված է Օսմանյան կայսրության քրիստոնյան ժողովուրդների դռմ :

Բայց հարկավոր էր և ավելի շոշափելի զաղափար՝ Հայրենիքի հասկացությունը: Այստեղ ևս սուլթանը կարող էր օգտվել պատրաստի ուս-

մունքից: Նա վերցնում է նոր օսմանների՝ օսմանյան հայրենիքի միասնականության և հզրության վերաբերյալ հիմնարար դրույթները: Բոլոր ազգերից, այդ թվում և քրիստոնյաներից, պահանջելով հավատարմություն և ստեղծագործ աշխատանք ընդհանուր հայրենիքի բարգավաճման համար, Արդու Համբին, անտարակույս, եռ էր նախապատրաստում գրտ մուտքանական բնակչության պետության համար, որտեղ պետք է ձևավորվեր ապագա հզր ազգային միավորը՝ բոլոր երմիկան տարրի գերիշխանությամբ:

Ստեղծելով համապատասխան գաղափարախոսությունը, այց դնելով պետական բաղադրականության հիմքում՝ Արդու Համբի Ա-ր, փաստորեն, դարձավ հիմնադիրը պետական դրկտրինայի, որի եռթյանն անփոփոխ մնաց և ուժեցույց եղավ թե՛ երիտարպերերի և թե՛ թեմապահանների համար: Իր նպատակի իրականացմանը սուլթանը ձգտում էր հասնել երկու միջոցով. առաջին՝ կայսրության տնտեսության մեջ մուտքանների դերի աշխատացմամբ, ոչ քրիստոնյա, հատկապես նոր ձևավորվող բոլոր բուրժուազիայի ամրապնդմամբ, երկրորդ՝ միատարր ազգաբնակչությամբ պետություն ստեղծելու միջոցով:

Հայունի է և այդ մասին արդեն նշվեց, որ քրիստոնյաները՝ հատկապես հայերն ու հույները, Օսմանյան կայսրության տնտեսապես առավել գործույթա տարրն էին կազմում և նրանցից եր սուտացվում պետության եկամուտների այցածի բաժինը: Կառավարման առաջին խոկ տարիներից Արդու Համբիդ հետևողականորեն փորձում էր փոխել իրավիճակը և ստեղծել հայերին ու հոյեներին հակակի՞մ մուտքաման ձեռնարկաների և մտավորականության նոր խափ: Դեռևս նոր օսմանները կայսրության հետամնացության ու տկարության պատճառներից մեկը բոլոր բնակչության կրթական ու մշակութային ցածր մակարդակն էին համարում: Արդու Համբիդ ևս ձգտում էր իր համար հենարան ստեղծել՝ դաստիարակելով եւլուսպական կրթության տեր, բայց մուտքամանական մեռանդությանը աղեցուն նոր սերունդ: Փաստորեն նրա ջանքերով էր, որ արդեն 1890-ական թվականներից սկսվում է «նոր հեղափոխություն բորբական կյանքում»<sup>1</sup>: Պատահական չէր, որ բորբանիզմի և բորբիզմի մասինքստը ծնվեց 1890-ական թվականներին, Հուսեին օադեն Ալի բեյի «Թուրքան» պետմով, իսկ նշանաբանը 1897 թվականին՝ հույն-բուրքական պատերազմի շրջանում, Ստեմեղ Էմին բեյի հայտնի խոսքերով.

<sup>1</sup> Ziya Gökalp, *The Principles of Turkism*, Netherlands, 1968, p. 6.

«Ես բուրք եմ: Իմ կրոնը և ազգը ազնվացեղ են»<sup>2</sup>: Կասկած չի կարող լինել, որ նոյն սուլթանի և ոռուական ցարի բաղադրական դաշինքի շնորհիվ էր, որ Շուսաստանում ևս այդ ժամանակ սկսվեց բորբական ծագում ունեցող մուսուլմանների զարբանքի շրջան, ի դեմս Սիրիա Ֆերի Ալի Ախունդովի և Խամայի Գասպրինսկու ծավալած գործունեության<sup>3</sup>: Արդու Համբիդ առանձնահատուկ «հոգածության» ներքո էր մահմեդական երիտասարդության կրթության կազմակերպումը: Փաստորեն, 1920-ական թվականներին Զիա Գենք Ալիի արտահայտած հիմնարույրը՝ «մտավորական ընտրանու դեսպի ժողովուրդ» գնալը, նրանից ազգային մշակույց սովորելի ևս, ըստ Էռքյան, Արդու Համբիդ մոլուանդ, ռասիստ մտավորականություն դաստիարակելու գաղափարի իրականացումն էր: «Գնալ դեսպի մշակույց» կոչով Գենք Ալիը անշուշտ, հասկանում էր գնալ դեսպի դարավար բնազմերը՝ բարբարության, մոլուանդության և ազգային բացարձիկության զգացումով ներարկվելու համար<sup>4</sup>: Սուլթանը փորձում էր նաև փոքր բարենորոգումների օգնությամբ, տնտեսական հիմք ստեղծել ապագա միաւենիկ պետության համար: Այս շրջանում էր, որ բացիցին տարբեր մասնագիտացումներով կրթական հաստատություններ, սակեացան պետական գանձարան մտնող հարկային մուծումների ծավալները, կառուցվեին բազմաթիվ գործարաններ, երկրում զարկ տրվեց ճանապարհաշինարարությանը: 1889 թ. շահագործնան հանձնվեց Հայդար փաշա-Անկարա երկարութագիծը<sup>5</sup>: Սակայն այդ դրական տեղաշարժերը չին կարող հզրացնել երկրը այն ապար պատճառով, որ սուսպած կայսիտապները գերազանցապես ծախսվում էին բանակի վրա և օգտագործվում էին ազգային-ազատազրական շարժումները ճնշելու համար: Հատուկ հրամանով բոլոր հասարակական պաշտոններից հեռացվում էին ոչ մուտքաման պաշտոնյաները, որպէս հատկապես զարված էր հասցվում երկրի առաջնորդաթացին: Հատկապես այս իրահանգը խնամքով էր իրականացվում «Ասիկական ժողորդայում»<sup>6</sup>:

<sup>1</sup> Ziya Gökalp, Ձեզ աշխ, էջ 5:

<sup>2</sup> Նոյն գրելում:

<sup>3</sup> Նոյն գրելում էջ 35:

<sup>4</sup> Shükrü Wittlin, Abdul Hamid. *The Shadow of God*, London, 1940, p. 148; St. L. Shaw, E. K. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, v. 2, Cambridge, 1977, p. 224, 225. Внешнеэкономические связи Османской империи в новое время, М., 1989, с. 116-119.

<sup>5</sup> Положение армян в Турции..., с. 253.

<sup>6</sup> E. M. Bliss. *Turkey and the Armenian Atrocities*, Philadelphia, 1896, p. 6.

Առավել մեծ բարերությունների ենտ էր կապված Արդուլ Համիդի երկրորդ՝ միաստարք ազգաբնակչությամբ Արևելյան կայսրություն ստեղծելու երազանքը: Դրա համար հարկավոր էր ամենից առաջ լուծել բրիտանական հարցը: Այստեղ երկրնորանք չկար, կա՞մ այս ժողովուրդները, խմբերը, ազգությունները պետք է ձուլվեին, կա՞մ գլխավիճ ոչնչացվեին ու տեղահանվեին: Սա շատ ավելի բարդ խնդիր էր, և այստեղ պետք է փնտրել ևս մեկ պատասխանն այս հարցի, թե ինչո՞ւ սուլթանը անմիջապես չորեգրեց բոլորիզմը: Անվերապահորեն հօչակելով բոլորական պետություն ստեղծելուն ողղված քաղաքականություն, Արդուլ Համիդը իր դեմ կլարկեր կայսրության մուտքան մյուս ժողովուրդներին, որոնցից շատերն ունեին իրենց զարգացած մշակույթը, ազգային նկարագիրն ու անկախության գգուումը: Այդ պատճառով այստեղ ևս սուլթանը որոշեց գործել աստիճանաբար, նաևս ստեղծել մուտքանական երկիր և ապա այն վերածել բոլորականի: Այլ դեպքում, բնական է, որ առաջին հարվածը պետք է հասագեր բրիտանյան ժողովուրդներին: Ընդ որում, գրոհային ջոկատների «պատիվը» շնորհվում էր ոչ բոլոր մուտքանաներին՝ քրդերին, ալբանացիներին, կովկասյան ժողովուրդներին ներկայացուցիչներին: Սուլթան Համիդն էր, որ զարգացնելով Օսմանյան պետության կառավարման ավանդական բարբարոսական ձևը, ստեղծեց հակամարդկային վարչական՝ ուղղված կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների դեմ: Միաժամանակ 1877-1878 թվականների ռուս-բուրգական պատերազմից հետո ակնհայտ էր, որ օսմանյան տիրապետությունը Բալկաններում այլևս հեռանկար չուներ գյատներու: Պայքար կարող էր լինել մրացյալ Կրետեի և Մակեդոնիայի համար: Այլ հարց էր Արևելքը: Դուրս նղվելով Արևմտարիզ, Արդուլ Համիդը պետք է փորձեր իր միաստարք պետության իմքնն այստեղ ստեղծել: Քայլ կայսրության այս մասամբ ևս ապրում և ստեղծագործում էր հնամյա քրիստոնյան ժողովուրդը: Հայրենիք, պատմություն, լեզու, ազգային վառ ինքնազմակցություն ունեցող հայությունը բնական խոշնալու էր համիդյան ծրագրերի իրազորդման համար: 1894 թվականին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին ուղղված զեկուցագրերից մեկում Կ. Պոլտում ֆրանսիական համբաւելության դեսպան Պ. Կամբոնը հետևյալ ուշագրավ միտքն էր հայտնում: «Ձերդ Բարձրությունը տեղյակ է Հայաստանի ռազմական և քաղաքական հշանակության մասին: Անմատչելի լեռները, որ վեր են խոյանում նրա տարածքում, երկատում և լիովին

սերը՝ Միջագետքն ու Անատոլիան»<sup>1</sup>: Խսկապես, մահմեդական օվկիանոսի մեջ վեր խոյացած հայկական կղզին անհանդուրժելի էր Համիդի համար: Ավելի բարձր նշակույթ ունեցող քրիստոնյա ժողովրդին ծովելլ փաստորեն անհնար էր, և սուլթանն ընտրում է մյուս՝ թնաշնջման միջոցով հարցը լուծելու ճանապարհը: Զուլումի քաղաքականությունն այսպիսով, իր սուր ծայրով ուղղվում է արևմտահայության դեմ: Ստեղծվում է խոր նշակած, կուր և ամրողական մի համակարգ: Այստեղ հաշվի էր առնված ամեն մի մանրուր և ամենից առաջ՝ արտաքին գործոնի դերը:

Ռուս-բուրգական պատերազմից անմիջապես հետո, հայերը Եվրոպայից ստացան 61-րդ հոդվածը՝ բարենորոգումների վերաբերյալ: Պարզ էր, որ այսուհետև այս խնդիրը ստանալու էր միջազգային հեշեղություն, և Հայկական հարցը որպես Արևելյան հարցի մի բաղկացուցիչ մաս, գտնվելու էր մեծ տերությունների ուղարկության կենտրոնում: Սակայն, նրանցից յուրաքանչյուրը փորձում էր իր ձևով օգտագործել հայկական խաղաղաբարտը: Լինելով ժամանակի խոշոր քաղաքացեաներից մեկը, Արդուլ Համիդը 1878 թվականից անմիջապես հետո կատարեց համապատասխան եղրակացուրժյուններ՝ մերձեցնան եզրեր որոնելով Ռուսաստանի և Գերմանիայի հետ: Վկարուսի համաձայնազիրը ևս մեկ անգամ համոզեց բուրգական կառավարող շրջաններին, որ իրենց հիմնական քշնամին Մեծ Բրիտանիան է: Ռուսաստանի աստիճանաբար գաղաքում էր սպառնալիք լինել Օսմանյան կայսրության համար, քանի որ վերանայել էր իր արտաքին քաղաքականությունը: 1870-1880-ական թվականների բուրգարական դասը դասերը, երկիր ներսում սկսած ելույթները, արտաքին քաղաքական բարդությունները ստիպում էին ցարին հարավային սահմաններում անցնել status quo -ի դիրքերին: Ինչպես սուլթանին, այնպես էլ Նիկոլայ II-ին առանձնահատուկ անհանգստություն էր պատճառում երկատված, քայլ ներսում մեծ հնարավորություններ ունեցող հայ ժողովրդի հարցը: Տարը հասկացել էր այն ճշմարտությունը, որ արևմտահայ և արևելյան հատվածների միավորումը Ռուսական կայսրության մեջ իր հետ անպայմաններն կրերի «նոր Բուլղարիայի» ստեղծում ուղղագրական կարևորագույն դիրքում: Նրան հարկավոր էր Հայկական իննաշխարհը, քայլ առանց նրա բնիկ ժողովրդի: Օրեկտիվորեն, արևմտահայ հատվածի բնաշնջման ծրագիրը համապատասխանում էր ցարական գգումներին: Եվ սրանից էր, որ ամենից ա-

<sup>1</sup> *Affaires Arméniennes, Projets de Réformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897, N 6, p. 11.*

ոաջ որոշեց օգտվել սուլթանը: Ստեղծվեց երկու երկրների քաղաքական դաշինք, որը սուլ ծայրով ուղղված էր հայ ժողովրդի դեմ:

Բերլին-Քաղցրական երկարութիւն ապահովում էր երկրորդ հզոր եռվանագորին՝ Գերմանիային, նիածամանակ հնարավորություն տալով տնտեսական փոփոխություններ իրականացնել Արևելքում: Մնամ էր պաշտպանվել Անգլիայի միջամտությունից, որը Կիպրոսի համաձայնագրից ի վեր, փորդ ընդհանումներով, Շուտրիայի համեմայ վարում էր ուժային քաղաքականություն: Ընդ որում, Մեծ Բրիտանիայի բոլոր զեկավարները հենքում էին Եվլուսական հասարական կարծիքի վրա, որը հատկապես բուլղարական ջարդերի և հայկական հալածանքներից հետո պահանջում էր սահմանաբարձր բռնակալին: Սուլթանական արտաքին քաղաքականության ուշադիր վերլուծությունը հանգեցնում է մեզ այն մորին, որ դեռևս 1880-ական թվականներից Արդուկ Համբիլդ կանխագուշակում էր հերթական արևելյան ճգնաժամը և ակտիվորեն նախապատրաստվում այդ գոտումարտին: Համականալով, որ ճգնաժամը կրօնելի որպես արդյունք իր հակահայկական քաղաքականության, և ի մեջնական հակագործ ուժը կիմն անզիմական դիվանագիտությունը, սուլթանը 1895-1896 թթ. կատարեց մկուն քայլ՝ Հայկական հարցի հետ մնալով տերությունների մեջնական դներով նաև Կրետեի քարտը: Եվ Եվրոպան ստիպված եղավ քախվել միաժամանակ երկու՝ հայկական և քաղաքանական հիմնահարցերին: Այրուալ պայքարից հետո զիշելով Եվլուսական Բալկաններում, որոշակիորեն բավարարելով անզիմական պահանջների մի մասը՝ սուլթանը փոխարենց ստանում էր ձեռքբերի բորչակի ազատություն Հայուստանում:

Լածելով արտաքին բառույթի քազմարիվ այլ հարցեր, սուլթանը միաժամանակ իրականացնում էր կարևորագույն ներքին խնդիրները: Հայության դեմ սուլթանը իր քաղաքականությունը Արդուկ Համբիլ Ա-ը սկսել էր իրազործել դեռևս 1880-ական թվականներից: Ինչպես ժամանակին ճիշտ նշել էր Հայկական դասի պաշտպաններից մեկը՝ Մաքրով Մաք Քոլլը, նախ և առաջ պատերազմ հայուստարքեց հայերի կրթական հանակարգին, մշակույթին և դավանանքին: Համբիլը գիտակցում էր, որ հայ ժողովրդի ազգային զարդոնքի դեմ պայքարում պետք է վճռվեր լինել-շինելու համեսյան հարցը: Այս սուլթանի օրոք էր, որ կառավարության կողմից սկսվեց կիրառվել նաև մշակութային ցեղասպանությունը: Ընդ որում, եթե ֆիզիկական բնացնջման մարտավարությունն հնարա-

վոր էր ժամանակ առ ժամանակ հանել զինանոցից, արտաքին պայմաններից կամ այլ նկատառումներից ելելով, ապա պետականորեն դեկավարով մշակութային ցեղասպանությունը շրադարեց հայ ժողովրդի նկատմամբ և շարունակվում էր արդեն ավելի քան հարյուր տարի: Միաժամանակ, սուլթանը փորձում էր անմիջական հարված հասցնել Հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ապրող հայերին՝ անտանելի պայմաններ ստեղծելով նրանց գոյության համար: Սովորական են դասնում արևմտահայ ժողովով նկատմամբ կիրառվող հայածանքները, խաղաղ բնակչության կորուպությունը, քաղանք ու քանությունները: Հայարձնական բոլոր մարզերում ստեղծվում է յուրահատուկ հակահայկական վարչակարգը: Երկիրը վեր է ածվում մի կատարյալ դժիգրի: Մեզ են հասել բազմարիվ փաստաբերեր, վկայություններ, մեճագույններ՝ հայ ժողովրդի անմարդկանական դանարդների նկարագրություններով: Մեր պատմության այս ողբերգական շրջանը գեւուս սպասում է իր ուսումնասիրողին:

«Առաջին քայլը՝ գրում էր Ժամանակի խոշորագույն իրավարակախոսներից մեկը՝ Էմ. Դիլոնը, բնաջնջման ծրագրի իրականացնան ուղղությամբ, այս էր, որ պարբերաբար քայրային ժողովրդին»<sup>1</sup>: Դա նախ և առաջ իրականացվում էր ամենադաշտն հարկային քաղաքականությամբ: «Օրինական» հարկերը՝ գլխահարկը, խարացը, տասանորդը, բազմարիվ և բազմատեսակ «պետական» հարկերը, սահմանվում էին կամայական չափերով և հավաքվում էին բնակչությունից ամենայն դաժանությամբ ու անխղճությամբ: Հատկապես ծանր էին գլխահարկը և ուղղամասն հարկը: Բացի սրանցից, հայ գյուղացին ստիպված էր տարվա մեջ մի քանի անգամ տուրք գնարել շրջակարիքի բուրք աղաներին՝ հավանական քալանից ու ասպատակությունից խոսափելու համար: Էլ սկիզ սարսափելի էին հարկերը զանձելու ձևն ու անիրավությունները: «Հայերից հավաքվող հարկերը չափազանց մեծ են, - նշում էր Դիլոնը, - կաշառքները, որոնցով միշտ ուղեկցվում էր դրանց հավաքումը, վերցվում են զափիրաների կողմից և ընդունելով ամենանողկայի ձերը, կարող են հասել աներևակայնի չափերի. ինչ վերաբերում է միջոցներին, որոնց օգնարքյամբ կատարվում է հարկերի հավաքումը, ապա դրանք իրենք իսկ Հայաստանում օտառնախյան տիրապետության ոչնչացման բավարար հիմնափորումն են հանդիսանում»<sup>2</sup>: Հարկային քաղաքականություններից կարուց մասնաւոր էր կառավարության առաջնային գործությունը:

1. Положение армян в Турции..., с. 333.

2. Նոյն գրքում, с. 338, 339.

կան հողատարածությունների և գյուղացիության հողերի բռնագրավումներով: Այսպես վարելով որոշակի ազրարային քաղաքականություն, կառավարությունը ձգտում էր հողագրկման և աղջատացման միջոցով քայրայի արևմտահայությանը և ստիպել նրան լրելու հարազատ երկիրը: Դատարանը և դատը այն հզոր ժաման էին, որոնց միջոցով բոլորական իշխանությունները լիալիստար սնանկացման շեմին էլեմ հասցնում արդարություն, պետական պաշտպանություն որոնել փորձող դժբախտներին: Հայերը գրկված էին ամենատարրական իրավունքներից: Այն հայր, ով փորձում էր իրեն անպատճաճ, իր ունեցվածքը քալանած մուտքանիմ՝ քրդին, բոլորին դատական պատասխանատվության ենթարկել և դիմում էր օրենքին, որպես արդյունք ինքն էր հայտնվում բանտում՝ այնտեղից հեռանալով կամ լովին աղքատացած (եթե հարուստ էր), կամ ամենին դրս չը գալիս: Խսկ բոլորական բանտի տաճանքները, իսկապես, կարող են սարասի մեջ զցել ընթերցողին:

Սուրանը տնտեսական ճնշումները գրագում էր ամենանուր քաղաքական հետապնդումներով: Պետական քաղաքականության աստիճանի էր բարձրացվել մուսաւանների բնակեցումը հայարձնակ գյուղերում և շրջաններում: Վերաբնակիչները տասը տարով ազատվում էին ռազմական ծառայությունից, ստանում էին անվճար հողատարածություններ՝ որպես օրենք հայերի կողմից արդեն լավ նշակված, եկամտաբեր եղերը և նյութական օժանդակություն: Զանգվածային այս վերաբնակեցումները հետապնդում էին մեկ նոյստուակ՝ վտինը հայարձնակ շրջանների ազգային կազմը, բոլուսնել տնտեսապես հարվածնել հայերին և հասնել նրան, որ հայ ազգարնակցությունն իր Հայրենիքում կազմի չնշն տոկոս: Հարկ է նշել և այն փաստը, որ հայկական վիլայեթներում հաստատվում էին բացառապես ռազմատեսչ հետամնաց, թալանով ապրող քրդական ցեղերը և հյուսիսկապայաց մոլուսն ցեղախմբերը: Սուրանի ծրագրում հասկապես մեծ դեր էր հատկացվում քրդերին: Դեռևս մեծ վեզիր Այի փաշան ժամանակին նշակել էր հասուկ ծրագիր, որի նպատակն էր քրդական ավարառությունը, բայ հնարավորին, բնակեցնել հայաշատ վայրերում «հավասարակշռություն» պահելու համար<sup>2</sup>: 1880-1890-ական թվականներին հասել էր և այդ ուժու օգտագործելու ժամանակը: «Համիլին» զորացոկատների ստեղծումը

<sup>1</sup> Տե՛ս Գեոօգրաֆիան в Османской империи, Ереван, 1982, с. 159.

<sup>2</sup> Գ. Լազար, Հայաստան և Հայ դպր, Երևան, 1991, էջ 122:

փաստորեն նշանակում էր, որ կառավարությունը հասել է իր բազմաստիճան քաղաքականության իրմանական փուլին՝ բացահայտ կոտորածների կազմակերպմանը: Դա ըստ Էռիքյան ազգային բնաշնչումը սկսելու պետական բոլոյատրությունն էր: «Համիլին» գորքերի ստեղծումը Բենվինի համաձայնագրի բացահայտ խախտում էր: Վ. Գլազուրոնը Չեստերյան ճառում տվել է «համիլին» զորացոկատների ստեղծման խոր վերլուծությունը: «Քրդերը ապրում են վայրենի կլաններով, այստեղ միտք արտահայտվեց (միտինգում նախագահող Վեստմինստերի հերցոգի կողմից), որ սովորաբ կազմակերպեց քրդերին: Ես հակված եմ վիճարկել այդ կարծիքը, քանի որ, ըստ իս, բրդական ցեղերը զորկ են ամեն մի կազմակերպվածությունից: Եթե նրանք կազմակերպված են, ապա այն սիստեմով, ինչպես կարող է կազմակերպվել ավագակների խումբը: Սուլանը և կոստանդնուպոլիսյան կառավարությունը ձևականորեն հավաքագրեցին ոչ մի զինվորական կարգապահություն չունեցող մարդկանց, կազմեցին կեղծ հեծելազորային զնդեր և ապա զորակոչեցին, նրանց լիազորելով որպես սովորական զինվորներ՝ ավերել ու բնաշնչել հայկական բնակչությանը: Այսպիսով, քրդերն այս սարսափելի գործին մասնակցող առաջին գործակալներն են, եւսու գալիս են իրենց շարամտությամբ քրդերին ամենին չզիջող թուրք զինվորները, երրորդ կատեգրիային են պատկանում քաղաքացիական չինովնիկները՝ ուստիկանությունն ու բոլորական կառավարության հարկահավաքներուն»:<sup>3</sup> 1895 թ. ապրիլին Վ. Գլազուրոնին գրոված նամակում Խրիմյան Հայրիկը լուսնին բացահայտում էր քրդերին օգտագործելու սովորանական քաղաքականության ևս մեկ կողմը: «Կասմինի կառավարությունն մը խորանակ քաղաքականություն հնարեց և յաջողեցաւ քիրտին ձեռքով այնշափ բազմաթիւ զյուղացի հայ ժողովորդ իրենց բնիկ բազմադրեան հայրենիքն հանել, վարել դրս գունդեգունդ հայ գաղբականներ, և յետոյ չընեն լինելով ասել՝ թէ քիրտն արեց»:

«Համիլին» հեծելազորների ստեղծումով սկսվում են հայության բացահայտ ջարդերը: Ժամանակի հայ և օտար քերդերը օրավոր ցնցվում էին Հայաստանի սարսափերի նկարագրություններից:

Երգումի նախկին հյուսատու Քիվիորդ Լյուդր իր զեկուցագրերից մեկում հետևյալն էր գրում: «Թողնելով մի կողմ որիշ կետեր, որոնց մասին դեռ կարելի է վիճել, կան երեք կողմեր բոլորահայերի դրույթան մեջ,

<sup>1</sup> Положение армян в Турции..., с. XIV, XV.

<sup>2</sup> Գ. Լազար, Հայ. աշխ. էջիւ. էջ 122:

որոնք բոլորն էլ ընդունում են և որոնց պետք է ամենաշատ դարձան անել.

1. անապահովություն կյանքի և սեփականության շնորհիվ քրդերի մշտական հարձակումներին.
  2. աճնական անապահովություն և լիակատար բացակայություն և խոռքի, և գործի, և խոճի ազատության.
  3. քրիստոնյաների անհավասար դրույթուն կառավարության աչքում՝ մահմետականների հետ համեմատելով»<sup>1</sup>: Մեծ տարածում էին ստանում բռնի մահմետականացումը, երեխաների, մանկահասակ աղջիկների զանգվածային առևանգումներն ու վաճառքը: Հակայական չափերի եր հասնում բողոքի գուսաց ձեզ՝ արտագաղթը Հայրենիքից:

Պետական ջարդարարական քաղաքականությունն էր, որ ոսրի հսկեց հայության ամենալայն խավերին, առաջ բերեց զինված պայքար: Հայ ժողովուրդը ստիպված էր դիմելու գենքի, նա այլ եկը չուներ, նրա առաջ չկար ընտրության հնարավորություն: Նման պայմաններում բնական է, որ հայածկած, ոչչացման եզրին կանգնած ժողովուրդը տարերայնորեն դիմում էր ինքնապաշտպանության: Հայության ամենալայն շրջաններում տարածում էր ստանում զինվելու, զենքը ձեռքին կրվելու և գոնես պատվով մեռնելու բնական ցանկությունը: Եվ սուրբանական ռեակցիան ի վիճակի չշրջ ճնշելու և կավագան ազատազրական պայքարը: 1880-1890-ական թվականները հայ ժողովուրդի քաղաքական զարդունքի տարիներ դարձան: Մշշկեց մարտական զաղափարախոսություն, ստեղծվեցին հայ առաջին ազգային կուսակցությունները, որոնք անելքակայելի ծանր պայմաններում համարձակորդեն իրենց վրա վերցրեցին համաժողովրդական պայքարի կազմակերպման նվազարին գործը: Հայությունը վերջիններիս առաջնորդությամբ մտավ իր դարավոր գոյամարտի վճռական զինված հեղափոխության ժամանակաշրջանը: Ինչպես ամեն մի ճնշված ազգի պայքար ընթան բռնապետության, հայ ժողովուրդի մարքությը և արդար էր, և ուներ առաջադիմական նշանակություն: Պայքարի բնույթը, ձևերով և եղանակներով այն խկազես ժողովրդական էր: Ազատազրական կօխվերի ուղին բռնած կուսակցությունների, ժողովուրդի դեկավարությունն ստանձնեց հեղափոխական ոգով դաստիարակված մտավորականությունը: Ինչպես բոլոր ժամանակների երիտասարդ մտավորականությանը, նրան ևս հասուկ էր անհա-

1 «Դրօշակ», Վիեննա, 1891, մայիս. էջ 6:

տական պայքարի հերթ գերազանահատումը, քաղաքական ոռմանտիզմի գաղափարներով տարբելը: Ե՞ւ հեշալյան, և՛ զաշնակցույթուն կուսակցույթների հիմնադիրները եվրոպական կրույժուն ստացած, Հայրենիքի ազատագրական զաղափարով վառվող երիտասարդներ էին, ուրանի Վեցրեցին ազատագրական պայքարի նեկը նախկին առաջնորդներից և ժողովրդին տարան հերոսական խոյանքի ճանապարհով: Պայքարի այս նոր ուժին ստիպում էր ընդունել ինքը՝ կյանքը Պատահական չէ, որ ժողովուրդը փարզեց կուսակցույթներին, նրանց մեջ գտնելով իր գոյատևման միակ հույսը, և վերջիններս հզորացան, ուսանողական խմբակներից նարտական ուժի վերածվեցին միմիայն հզոր համագոյային աջակցույթան շնորհիվ: Չնայած ծրագրային տարակարգույթներին, որ պայմանավորված էր հեշալյան կուսակցույթան դեկավարույթան սոցիալիստական ուղղվածությամբ, և՛ հեշակյանները, և՛ ՀՀ Դաշնակցությունը հետապնդում էին մի հիմնական նպատակ՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը: Հեշակյան կուսակցույթներ ազգային անկախության ձեռքբերումը բացահայտուեն հոչակում էր որպես կարևորագույն խնդիր: Ծրագրում նշվում էր. «Սեր համոզւմն այն է, որ այդ քույրա վիճակից ժողովրդին փրկելու և նրան զնելու այն ուղիի վրայ, որը նրան միջոց տար դիմելու դեպի սոցիալիստական կազմակերպությունը, դեպի այն հեռաւոր նպատակը, անհրաժեշտ է բոլցաց Հայութանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատաթիւն և ազգային անկախութիւն, որոնք և դառնում են Սօվուակայ նպատակ»<sup>1</sup>: 1890 թվականին իր հիմնադիր Մանիկեստում ՀՀ Դաշնակցությունը հայտարարում էր. «Նպատակ դնելով թիւրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» նշել է այն կոռու մեջ, որ սկսել է ինքը ժողովուրդը, տաճկաց կառավարութեան դէն, ոխտելով մինչև արեան վերջին կարիլ կոռւել հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամենը ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան պահակը<sup>2:</sup>

Արևմտյան Հայաստանի դպրերով խավարի մեջ կրած և մռացված զուղկերում ու քաղաքներում հիմնվում էին ազատազախան գաղտնելի խնճքակներ, ստեղծվում էին հեղափոխական կազմակերպություններ՝ Հարյուրավոր հայ երիտասարդներ, աշխարի ամենատարբեր երկրնե-

<sup>1</sup> Պատմություն U. Դ. Հաջակիան կուսակցության հ. Ա. Բեյրութ, 1962, էջ 33.

<sup>2</sup> «Դրոշակ», բոնիգիկ թերթ, 1890, N 1:

րից, տարբեր խավերից և դասակարգերից, կազմակերպում էին կամավորական ջղկատներ Արևմտյան Հայաստան անցնելու, անհավասար գոտենարտիք թռնած, բնածնջման ենթարկվող եղբայրներին օգնելու, կովելու և երանց հետ մեռնելու համար: «Փոխարէն արցունք քափելու մեր աղետների ու կորուստների վրա, - գրում էր «Հնչակը» 1895 թվականին, -անձեռներույամբ ու սուրբ զգացումով ճեղքենք ընկածների արինից գոյացած Ռուբրիկոնի կուրծքը և երանք դեպի առաջ»<sup>1</sup>:

1891 թվականին «Դրօչակում» տպագրիք հայկական հեղափոխության սկզբնապատճառներին և մարտավարությանը նվիրված ծրագրային փայլուն հորդագծ-վերլուծություն։ Այնտեղ իրավացիութեան շեշտվում էր։ «Ամեն մի քաղաքական կուսակցութիւն՝ գաղափարի համար կորի սկսելով կարող է յաջողութեան յոյս ուժենան միայն այն ժամանակ, եթե կան հետևեան երկու անհրաժեշտ պայմանները».

2.Երեւ կորի համար ընտրուած են այնպիսի նպատակահարմար ձևեր և միջոցներ, որոնք բոլորովին համապատասխան են ներկայ իրականութեան և պատմական բռնկի պահանջած պայմաններին»<sup>2</sup>:

Հայ ժողովրդը ինքն էր սկսել ազատագրական պայքարը, և այստեղ էր հայ հեղափոխության ուժը ու կենսոնակության զարդարիքը: Ինչպես իրավացիութեան նշվում էր նոյն հոգվածում. «Խսկապէս սասած՝ ինտելիգէնցիան միայն արձագանք տուեց ժողովրդի պատերազմական կոչին, որ լսուց անակնակալ կերպով»:<sup>3</sup> Համաժողովրդական պայքարի հետահարը թելադրում էր և մարտավարությունը. «Ամենից առաջ, - գրում էր «Դրօշակը», - պետք է նկատի ունենալ, որ մեր կիրար ժողովրդի կոիր է նրա զարագիր բռնակալների դէմ: Իրքը ժողովրդական կրի, նա չի կարող կանոնաւոր գօրքերի վարած պատերազմի ձև ունենալ, իհարկէ, եթէ մի արտակարգ դէկոր չպատշի: Ոչ, հայ ժողովրդի կոփր պէտք է պարտիանական կրոլ լինի. մենք այժմեան դրութեան մէջ ուրիշ կերպ կրուել չենք կարող. կանոնաւոր պատերազմ, խսկական ճակատամարտեր անհնար են մեզ համար»:<sup>4</sup>

<sup>1</sup> «Հայոց», Ենթան, 1895, N 24, դեկտեմբեր:

2 «Դրօշակ», 1891, N 2, սեպտեմբեր:

3 Նոյնա պեղում:

4 Նոյի լուսաբան:

- Աշխարհի շատ ժողովուրդների ազգային-ազատազրական գիրված պայքարի մարտավարությունն էր սա՝ սկսած իսլամական Գերրիլայից մինչև բուլղարական ապստամբությունը։ Սակայն, հայկական հեղափոխությունն ուներ հիմնական առանձնահատկություն։ Այն ընթանում էր ծայրահետ աննպաստ պայմաններում և փաստորեն, պարտազդական էր սուլթանական կառավարության կողմից, որ իր հայացինց քաղաքականությամբ չէր բողել ժողովրդին ոչ մի այլբնտրանքի հեարագործություն։ Հայ ժողովրդին ուղղված իր նամակներից նեկում Զ. Գարիբալդիի գիրնակիցներից մեկը՝ Ամիլյար Շիարիանին հետևյալ խորհուրդն էր տալիս «Լիովին բնաջնջումի դատավարության ժողովուրդ մը իր յուահաս դիցազնութեան մէջ պէտք է նետ միայն յոյսը։ Ամէն պատերազմ, որ կտանի ազատութեան, արդար է և օրինաւոր։

Կամ՝ մեռնի հերսոսի պէս՝ զենքը ձեռքին կոռտելով, կամ մեռնի անարի և վատասիրտ, համակեռա ու լայկան»<sup>1</sup>:

1 Երրապացիների կարծիքը Հայկական դատի մասին, իրավ. “Դրօշակի”, ԺԱՆ, 1907  
Եղ 15, 17:

մի բարձրաստիճան բուրք ինձ ասաց. «Հայկական հարց գոյություն չունի, բայց մենք այն կստեղծեմ»: Այս կանխագուշակությունն իրականացավ: Հայկական հարցն այսօր գոյություն ունի»: Հայկական հարց ասելով, Բ. Դուքը հասկանում էր հայ բնակչությանց Հայրենիքից դուրս մնելու հարցը, իսկ «կստեղծեմ»-ը, անտարակույս, նշանակում էր բացահայտ կոտորածներով նրան ոչնչացնելու քաղաքականությունը: Եվ չի կարելի երբեք մեղադրել հայոց ազատագրական պայքարը, կուսակցություններին «անհեռանկար պայքարի», «անհեռատեսության», անգամ «առիք լընենելու» մեջ: Ամեն ինչ արդեն կանխորշված էր և պետք է հանգեցներ կոտորածի: Նոյն դեսպանը այսպես էր շարունակում իր միտքը. «Այդ շրջանում (այսինքն՝ Շեռլինից և Կիարոսի դաշնագրից հետո- Լ.Ս.) հայ ազգայնական ինքնագիտակցության զարթոնքը դեռևս տեղի չէր ունեցել, հայկական անկախության զաղափարը գոյություն չուներ, կամ եթե կար՝ միայն մի քանի ուսայաների մտքերում, որմեր ապաստանել էին Եվրոպայում»: Այնուհետև, նկարագրելով հայերի դրույթունը, Կամբոնը եղբակացնում էր, որ բուրքերն իրենք էին աճեցնում հեղափոխականներին, և ժողովուրդը, որը տկար ու անպաշտպան էր, ատիպված էր նույածեկ երկու տարրական բաների՝ «ազատության» և «գաղտնի կազմակերպություններ ստեղծելու մասին»<sup>1</sup>:

Խոսելով համիլյան զոլոտի մասին, անհրաժեշտ է տառակել հանգամանորեն անդրադառնա ջարդերի մեխանիզմին: 1890-ական թթ. բուրքական կառավարությունը վերջնականացնելու նշակեց և հարատարեց կոտորածներն իրականացնելու դարավոր զինանոցը: Դա նման ծավալմերով բնածնջման առաջին փորձն էր, ուստի և որոշ վայրերում տեղական իշխանությունները չկարողացան կազմակերպված իրագործել կենտրոնի իրահանգները: Բոյքը «վիճակումներն» ու «սխալները» հետագայում հաշվի առնվեցին Համիլյի հաջորդների կողմէց: Սասավորակն 1915 թվականին կատարվեց այնպիսի խոշոր քայլ, ինչպիսին էր բնածնջման իրականացումը ոչ քե տեղում, այլ դեպորտացիայի միջոցով, տեղափոխման ընթացքում:

Ուշադիր բնածնջունը ևս մեկ անգամ համոզում է, որ 1894 թվականից մինչև 1897 թվականն ընկած ժամանակահատվածի արյունալի իրադարձություններն ամենայն մասնամասնությամբ նախապատրաստված

<sup>1</sup> *Ministère Affaires Etrangères. Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897. N° 6. p. 10.*

են եղել և իրականացվել են սահմանված հաջորդականությամբ: Սուլթան նախ փորձում էր հարվածել իայ ժողովոյի ազատագրական պայքարի դարավոր կենտրոններին՝ Սասունին, Զեյթունին և Վանին: Ընդհանրապես, կարելի է անցկացնել սուլթանական ջարդարարության որոշակի դասակարգություն: Հայության ոչնչացումն իրականացվում էր երեք ճակատներով: Առաջինը, ինչպես նշվեց, ամրացված լեռնային շրջանների և ինքնապահտանության ընդունակ բնակչության բնածնջման փորձն էր: Եթե 1894 թվականին Սասունում դա մասամբ հաջողվեց՝ ոչնչացվեց շուրջ 10 հազար խաղաղ բնակչություն, ապա Զեյթունում, Վանում, Հաճբուն և հայությունը, չնայած մեծ կրուստներին, կարողացավ ոչ միայն ծախողել Բ. Դռան ծրագրերը, այլև նույնիսկ մի շարք փառավոր հաղթանակներ տարավ կառավարական գործերի և բաշխրողությունների տանիյակ հազարներից կազմված բանակների դեմ: Երկրորդ կարևորագույն փոյս կայության հայաշատ քաղաքներում կազմակերպված ջարդերն էին, որոնց վրա հարկ է կանգնել առանձնակի ուշադրությամբ: Այդ ջարդերը, ի տարրերություն վերը իշխատակված շրջանների, իրականացվում էին հիմնականում մուսուլմանական մոլեռնադրությամբ առեցուն քաղաքային բնակչության, դրսից բորված ավագակների և բանտերից բաց բողնավ քանակամաս տարրերից կազմված զոկատների օգնությամբ: Եթե դիմադրական պայքարի սովոր բոնած Սասունի, Զեյթունի և Վանի համար անհրաժեշտ էր օգտագործել ոչ միայն բրդական, չերեցական զինական ուժը, այլ նաև բանակը, ապա մեծ մասամբ անպահտպան հայ քաղաքային բնակչության համար նման քայլերի կարիք ամենակին չկար: Ինչպես առաջինների, այնպես էլ երկրորդների նկատմամբ հաշվեարդարը Բ. Դռու բացատրում էր հայկական հեղափոխությամբ և մուսուլմանական մոլեռնադրությամբ: Իրականում, փաստերը վկայում են, որ հատկապես վերջինը ապրերարար ներարկվել է բնակչության մեջ կառավարության ներկայացուցիչների, լուտսական լայն ցանցի միջոցով: Ընդ որում, մուսուլմաններին ահարեկում էին այն հեռանկարով, որ հայերը ձգտում են ստեղծել իրեն պետությունը և բարենորոգուներից անմիջապես հետո կամաց մուսուլմանների ջարդը: Հայերին նոյն լրտեսները պատում էին, որ մեծ տերությունները համաձայնության են եկել Հայաստանում զինան միջամտության հարցի շորջը, և բավական է բարձրածայն բողոքել, որ կատարվեին հայերի իդերը: Միաժամանակ Եվրոպային հայ անհիշանականներով վախեց-

<sup>1</sup> Ahna Wittlin. Աշվ. աշխ., էջ172.

նող սուլթանը, յուրաքանչյուր տեղային ջարդից հետո փորձում էր իրադրությունը ներկայացնել որպես հեղափոխականների սադրանքի հետևանքով առաջացած անկայունության արդյունք:

Թավարարվենք մի քանի վկայություններով: Էրզրումի ողբերգական իրադրություններից անմիջապես հետո, 1895 թ. հոկտեմբերի 28-ին, ոռոսական ներկայացուցիչը դեսպան Ա. Նելիդովին ուղղված գեկուցագրի վերջում հատուկ շեշտում էր: «Ի՞ն պարտք և նմ համարում լրացնելու մետրանդումը կատենարիկ հայտարարությամբ այն մասին, որ հոկտեմբերի 18/30-ին Էրզրումում հայերի կողմից ոչ մի հեղափոխություն չի եղել»<sup>1</sup>: Վաճառմ ոռոսական փոխայլուպատու Վ. Մանսկին 1895 թ. նոյեմբերի 1-ին հեռագրում էր ոռոսական դեսպանատուն: «Վերջին շաբարքա ընթացքում շատ հայեր, վախենալով այսուղ Տրավիզոնյան և Էրզրումյան անկարգությանների կրկնությունից, մի քանի ընտանիքներով տեղափոխում են առանձին տներ և այդպիսով ապրում 50-60 և ավելի անձից կազմված համայնքներով: Խորքական իշխանությունները դա նկատելով, իշարկէ կարող են իմք ունենալ այդպիսի հավաքները ներկայացնելու բոլորին այլ խմասով»<sup>2</sup>: 1894 թ. դեկտեմբերի 15-ի գեկուցման մեջ Հայերի ոռոսական հյուպատոսը, նշելով գեներալ համանգապետի և վիդայերի փարչական խորիրի հայատայց քաղաքականության մասին, գոտու է, որ միայն «Վերջին ժամանակներու այսուղ ձերքակալվեցին մինչև 30 հայեր՝ ինչ-որ քաղաքական դպրագության մեջ մասնակցություն ունենալու կասկածանքով»<sup>3</sup>: Կառավարությունը էլ ավելի խնամքով էր նախապատրաստում ջարդերի հստակած գործնական կողմք: Թագմարիկ փաստերը, վկայությունները, նկարագրությունները անառարկելիորեն ապացուցում են, որ 1895-1897 թթ. կոտորածներն անմիջականորեն կազմակերպված են եղան իշխանությունների կողմից, ընթացել են միևնույն սցենարով: Խորքական կառավարության բոլոր փորձերը՝ մի կողմ քաշկան պատասխանատվությունից, իրողությունը ներկայացնել որպես ամրության, զանգվածային անկարգություններ, չեն դիմանում ոչ մի քննադատության: Այսուղ թերենք սուլ մի քանի մեջքերումներ ոռոսական և եվրոպական դիվանագիտական ներկայացուցիչների գեկուցագրերից, ներկայացացիշների, որոնց նույնիսկ

1 АВПР, ф. Просольство в Константиноополе, дело 3179, опись 517, л. 102.

2 АВПР, ф. Просольство в Константиноополе, г. 1895, дело 3179, опись 517,

л. 107.

3 АВПР, ф. Политархив, дело 229, опись 482, л. 12.

բոլոր ներկայախ կեղծարարները չեն կարող մեղադրել հայասիրության, փաստերի կանխամտացածին աղավաղումների մեջ: Դրանցից երկուսի հեղինակը Հայեայ ոռոսական հյուպատու Յակիմանսկին է ցարական առավել փոքրված դիվանագետներից մեկը, որն ակտիվորեն իրագործում էր Ս. Պետերբուրգի ստացած գաղտնի երահանգները՝ տապալելով Զեյթունու 1896 թ. ներ տերությունների, և հայտնի էր հայկական հեղափոխության նկատմամբ իր անքարեհած վերաբերությունը: 1895 թ. նոյեմբերին նա գրում էր Ա. Պոլսի ոռոսական դեսպան Ա. Նելիդովին: «Գաղտնի հեռագրով, ես պատիվ եմ ունեցել այսօր տեղեկացնելու Զերդ բարձրությանը, օտար պետությունների հավանական միջամտության սպառնալիքի ներքո ըրխատունյաների կոտորածները դադարեցնելու Դռան հրամանի և Այն բափում սույն ամսվա 5-ին զրիված քրիստոնյաների թվի սաստին: Որոշ տեղեկություններով հաշվում են նոյնիսկ ավելի քան հազար սպառնակածներ և վիրավորածներ: ...Եվ Այնքափում, և Սարաշում դիակներն այրված են, և զորքերով շրջապատված ողջ մնացած քրիստոնյաները նեարագործություն չունեն հեռանալու իրենց բաղարներից»<sup>1</sup>: Նոյեմբերի 24-ին նա տալիս է առավել ընդարձակ նկարագրություն և տվյալներ. «Արյունոտ նկարագրությունները Ռուֆայում, Այնքափում և Սարաշում, ինչպես նաև նրանց շրջակա զյուլերում, կարելի է ասել, իրակրած են տեղի բորբական իշխանությունների կողմից: ... Գեներալ-նահանգապետի, մյուրեսարիկների և զայնազանների մոլունդրությունն ու հայերի նկատմամբ անսրող ատելությունը, ինչպես նաև նեղավոր նուալւնաների վասահությունն իրենց անպատճելության մեջ անմիջական պատճառ դարձան հայերի ոչընշացման համար... Իհարկե, ապագա անկողնակալ հետաքանություն կազմակերպված են եղան իշխանությունների կողմից, ընթացել են միևնույն սցենարով: Խորքական կառավարության բոլոր փորձերը՝ մի կողմ քաշկան պատասխանատվությունից, իրողությունը ներկայացնել որպես ամրության, զանգվածային անկարգություններ, չեն դիմանում ոչ մի քննադատության: Այսուղ թերենք սուլ մի քանի մեջքերումներ ոռոսական և եվրոպական դիվանագիտական ներկայացուցիչների գեկուցագրերից, ներկայացիշների, որոնց նույնիսկ

1 АВПР, ф. Просольство в Константиноополе, г. 1895, дело 3179, опись 517,

л. 141.

2 АВПР, ф. Просольство в Константиноополе, г. 1895, дело 3179, опись 517,

л. 195.

խուսվել են ոստիկանության և գինվորականության կողմից: Ընդ ոյում, քուրք բնակչության մեջ տարածվել էին լորեր, որ հայերը նախապատրաստվում են հարձակվել մուտքանմների վրա<sup>1</sup>: Կենտրոնական կառավարության արյունոտ դերը հատկապես վառ արտահայտվեց 1896 թվականի Կ.Պոլսի ջարդերի ժամանակ, որն անմիջապես հետևեց ՀՀ Դաշնակության սպառիկների կողմից Օտոտոմանյան բանկի գրավմանը: Ժամանակին եվրոպական մասնություն, նոյնիսկ հայկականում, երևացին հոդվածներ, որտեղ Կ.Պոլսի կոտորածների նախապատճառ էին համարում հայ հեղափոխականների գործողությունները և նայարաքարի որոշ քաղաքասերում կազմակերպված գինված դիմադրությունը: Գ. Ռոշբրոնը, որը խիստ լավատեղյակ էր բուրրական լրականությանը, իր արժեքավոր աշխատության մեջ հետևյալ տեղեկությունն էր հայտնում. «Բանձի վրա հարձակումից ոչ ավելի քան մի քանի րոպե հետո, ոստիկանության միթխոսորի կողմից կազմակերպված բուրբերի ավագակախմբերը սկսեցին Ստամբուլում և Գալիպայում իրենց պատահած հայերի սպանությունները: Նրանք հովանավորվում էին մեծ զրամիավորումների կողմից, որոնք որոշ դեպքերում մասնակցեցին արյունահեղությամբ»<sup>2</sup>: Կոտորած շարունակվեց երեք օր, և արյունքում ոչնչացվեցին ոչ միայն հազարավոր հայեր, այլ նաև ազգարի արվեստ երանց պատկանող ողջ հարստությունը: Սուլթանը որոշել էր իմանական հարվածը հասցնել մայրաքաղաքի տնտեսապես հզոր հայությանը: Աս էր պատճառը, որ ջարդերից հետո Կ.Պոլսում սկսվեցին հայության զանգվածային ձերբակալությունները և հալածանքները: Անտանելի պայմաններ ստեղծվեցին նաև ուներ խավի ներկայացուցիչների համար: Մ. Մար Ջալլ Կ.Պոլսի ջարդին նվիրված իր հոդվածում վկայում էր. «Ամեն ինչ կտարվել էր մեծագոյն կազմակերպվածությամբ, և չկար անհիշխանության ոչ մի նշոյլ այդ օրերին չկար մի րոպե, որ բանակը և ոստիկանությունը չվերահսկեին բաղադրի իրադրությունը. մի քանի հայկական քաղաքանակեր՝ Մկյանտարը, Գում Գափուն և որիշներ, որոշ նկատառումներով պաշտպանվեցին և այսուղեւ սովորականի վես խաղաղ էր ու անխոռով»<sup>3</sup>: Սակայն սրանով չէր ավարտվում բնակչության սխննան: Հայ ժողովրդի ստվար հատվածը բնակվում էր հայրենի եզերներում, զրադակում էր երկրագործությամբ, անսանապահությամբ: Մրանց դեմ էր հիմնականում ուղղված սովանական հատուկ հարկային քաղաքականութ-

1 «Turkey», (1896), N 2 no. 91, p.57.

2 *The Armenian Genocide*, vol. I, p. 196.

3 *The Armenian Genocide*, vol. I, p. 218.

յունը: Ամրացված շրջանների դեմ պատերազմների, քաղաքային ջարդերի հետ միաժամանակ սկսվում էր Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի հայաբնակ զյուղերի, շենքերի զանգվածային ոչնչացումը: Այստեղ հիմնական դերակատարները «համբիկե» ջոկատներն ու տասնյակ հազարների հասմող բաշիրոգուներն էին, որոնք, խւապես, երկիրը վերածեցին անապատի և սպանանոցի:

Փաստորեն, կազմակերպված ֆիզիկական ոչնչացումը սկսվեց Սաստունում՝ 1892- 1894 թվականներին և շարունակվեց մինչև 1890- ական թվականների վերջերը: 1895 թվականի սեպտեմբերի 30-ին ահավոր կոտորած տեղի ունեցավ Բաքրեդում: 1895 թ. հոկտեմբերի 5-ին սկսվեց Տրավիզոնի սարսափելի ջարդը: Մրի քաշվեցին հազարավոր հայեր, ավերվեցին շրջակային հայկական բնակավայրերը: Երկու ամսվա ընթացքում կոտորածների ալիքը տարածվեց հայարձակ համարյա բուրք մարգերում: Տասնյակ հազարավոր կանայք, երեխաներ, ծեր և երիտասարդ բնակիչներ ոչնչացվեցին Երզնկայում, Ներքանում, Թիրլիսում, Ուսիայում, Շապին Կարահիսարում, Կարինում, Խարբերդում, Մալարիայում, Մարզվանում, Դիարբեքիրում, Սղերդում, Սերաստիայում, Այնրափում, Մարաշում և այլուր: Արևմտահայոց ցեղասպանության սկիզբն էր սա, ցեղասպանություն, որի արդյունքում ոչնչացվեց իր Հայրենիքում ապրող օսմանահավատակ հայությունը: 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՍԱԿ-ում ընդունված Յեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշվում է. «Ներկա կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ կատարված ազգային, էրեխիկ, ուսսայական կամ կրթանական սխումբը, որպես այդպիսին, ամբողջույնամբ կամ մասնակիրուն ոչնչացնելու նշանակում»:

- ա) խմբի անդամներին լրից մարմնական կամ հոգեկան վճառ հասցնելը,
- բ) խմբի անդամներին լրից մարմնական կամ հոգեկան վճառ հասցնելը,
- գ) խմբի համար կանխամտածված կերպով կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք, նախապես պարզ են, որ հանգեցնելու են նրա ֆիզիկական ոչնչացման՝ անբողջովին կամ մասնակիրութեմ,
- դ) խմբի ներսում ծնունդների կանխմանն ուղղված միջոցառումների պարտադրումը,
- ե) խմբի երեխաներին հարկադրաբար մեկ այլ խումբ փոխանցելը»<sup>4</sup>:

1 F. Chalk and K. Jonassohn, *Genocide: An Historical Overview*, Social Education, N 2, February 1991, p. 92.

Հազարավոր արխիվային գավերաբղերը (դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներ, մամուլ՝ վկայություններ) անհերքելիորեն վկայում են, որ 1880-ական թվականներից արևմտահայության նկատմամբ բուրբական վարչակարգի կողմից կիրառվել են միաժամանակ բոլոր ենթակետերով սահմանված գործողությունները։ Նախքան ֆիզիկական բնաջնջմանը, երկրում ստեղծվեցին կյանքի, կենցաղի դժոխային պայմաններ, պետական քաղաքականությամբ քայլայվեց հայ ընտանիքը, պատերազմ հայտարարվեց այդ ժողովովի կրոնին և ծշակույրին։ Այնուհետև ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ, նույնքան օսմանահպատակ հայ քաղաքացիներ տարագրվեցին երկրից, հազարավոր երեխաներ, որպես սորուկ, վաճառվեցին համալրելով հարեններն ու անառականոցները, մի հսկայական զանգված հարկադրաբար դավանափոխվեց՝ փրկելու համար կյանքը։

Վասիլով, անժմստեի է, որ 1880-ականներից սկսալ մինչև 1890-ական թվականների վերջինը բուրբական պետական վարչամերենան Արդու Համիդ II սուլթան անմիջական դեկավարությամբ, սկսեց իրականացնել հայ ժողովովի օսմանահպատակ հատվածի սիստեմատիկ բնաջնջման ծրագիրը։ Այդ քաղաքականությունը մասամբ ձախողվեց՝ շնորհիվ հայ ժողովով ազգային-ազատագրական զինված պայքարի, որը, չնայած ծանրագույն կորուստներին, տոկալով և դիմադրելով՝ Օսմանյան կայսրությանը կանգնեցրեց ներքին և արտաքին բնույթի այնպիսի բարդությունների առջև, որոնք ստիպեցին բուրբական կառավարող շրջաններին, առժամանակ, դադարեցնել հայության ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրականացումը։